



## ԱՐՄԻՆԵ ՔՅՈՇԿԵՐՉՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ «ՍԱՂՄՈՍԱՅ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ» ՆՈՐԱՀԱՅՑ ՏԱՐԲԵՐԱԿԸ\*

Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնության» մյուս բնագիրը, որը պիտի կոչենք բ տարբերակ, պահպանված է համեմատաբար շատ ձեռագիր օրինակներով: Մաշտոցի անվան Մատենադարանում կան շուրջ 30 գրչագրեր՝ մեծ մասամբ ԺԵ և ԺԷ դր. ընդորինակությունները: Քիչ չեն նաև արտասահմանյան հավաքածուներում գտնվողները: Պահպանված օրինակները բնագրային լուրջ տարբերություններ չունեն, բայց մերժ ընդ մերժ ընկատվում են խմբագրական միջամտություններ, հավելումներ: Հատ տպագիր աղբյուրներում եղած տվյալների, ժամանակի առումով ամենամիշտ Մատենադարանի № 4958 ձեռագիրն է՝ ներկայացված իբրև 1405 թ. ընդօրնակություն<sup>30</sup>: Այս թվականը վերցված է 265թ թերթում գտնվող հիշատակարանից, իրականում, սակայն, ուս ոչ թե գրչինն է, այլ հետինակինը և նկատի ունի աշխատության հորինման ժամանակը: Գրչի՝ Գրիգոր Զուղայեցու հիշատակարանները, որոնք

\* Շարտանական «Եշմիածին» ամսագրի 1987 թվականի № № ԺԱ-ԺԲ-Խց:

<sup>30</sup> Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Ա, էջ 1823: Ձեռագրի գրությունը միապուն է, էջն ունի 84 տող. այն թերթերը, որ կան նետագրի լրացումներ, ունեն տարրեր գըրչություն և առավել խիտ են գրված, կազմելով 48—49 տող: Այս ձեռագրի մասին տե՛ս նաև՝ «ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 51—52:

գտնվում են ձեռագրի 27ա, 44թ և 86թ թերթերում, ոչ մի թվական չեն բովանդակում: Գրիգոր Զուղայեցին Տաթևացուն աշակերտել է 1390—1409 թթ.<sup>31</sup>, իսկ տվյալ ձեռագիրը նա, հավանաբար, ընդօրինակել է ավելի ուշ, որովհետև այնունա կան հավելումներ ու, մեր կարծիքով, դրանք պատկանում են նենց նրա գրչին: Գրչության վաղեմիտության և բնագրի անաղարտության առումով համեմատաբար լավ օրինակ է Մատենադարանի № 1198 ձեռագիրը, գրությած 1413 թ. Տաթևում, Հերմոնում և Եղվարդում՝ Հովհաննես Երզնկացու ձեռքով: Վերջինս աշակերտել է Գևորգ Երզնկացուն, իսկ ավելի ուշ՝ Գրիգոր Տաթևացուն<sup>32</sup>: Հենց այս գրչագիրն է մեզ համար ծառայել իբրև հիմնական աղբյուր, թեև հաճախ նկատի ենք ունեցել նաև որիշ՝ ավելի ուշ շրջանի ընդօրինակություններ:

«Սաղմոսաց մեկնության» Բ տարբերակը ունի ծավալուն խորագիր և ուշագրավ հիշատակարան, որոնք աննշան տարբերություններով կրկնվում են բոլոր աղբյուրներ-

<sup>31</sup> Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 806: Գրիգոր Զուղայեցին իբրև Տաթևացու աշակերտ հիշված է նաև Թովմա Մեծոփեցու կողմից (տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմութին Լամկ Թամուրայ և յաջորդաց իրոյ, Փարիզ, 1860, էջ 51):

<sup>32</sup> Տե՛ս «ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 141—143, 754):

րում: Բերում ենք խորագիրը ըստ № 1198 ձեռագիր օրինակի:

Նորին բազմերշանիկ և երանաշնորհ սուրբ հաւըն և աւելայր հովետորի և լուսաւոր վարդապետի և խարազնազգեաց ճրգնաւորի նորոգ լուսաւորչի Հայոց Գրիգորի եռամեծի՝ լուծմունք դժուարիմաց բանից և քաղուածոյ Սաղմոսացն Դաւթի ի սրբոյն Վարդանայ Մեկնութենէ, յոյժ պիտանի շարադրութեամբ և գեղեցիկ պիտառութեամբ: Անգելեաց Հոգի Աստուած և առ քեզ աւարտեամբ<sup>33</sup>:

Այստեղ հիշված Վարդանը Արևելցին է, իսկ ի սրբոյն Վարդանայ Մեկնութենէ խոսքերը հուշում են, որ երա կատարած Սաղմոսացն Մեկնությունը հիմք է ծառալի Տաթևացու տվյալ երկի համար: Հեղինակն Արևելցուն անդրադառնում է նաև իր թողած հիշատակարանում, որը ոչ միայն տալիս է աշխատության գրության ճշգրիտ թվականը, այլև լույս սիրուս հարակից այլ հարցերի վրա: Ահա այդ հիշատակարանը.

Յիշտակարան<sup>34</sup>. ընդ որոց վերջին բանափրաց և տրուպ խնդրողաց բանին սիրուակ անոն կոչեցեալ Գրիգոր, մեղաներկ անձամբ և տիսեղծ մատամ վերստին հաւաքեցի զքաղուածոյն մեկնութեան Սաղմոսացն Դաւթի, ի նեղ և ի սոտրատովեալ ժամանակին, որում բրնձական Թամոր թոյլտութեամբ վերին խնամոցն տիրեալ բազում աշխարհի և աւերեալ. եւ կործանեցաւ լայս ամի ՊՇԴ (1405) թուի: Եւ պատճառ շարծութեան վերստին քաղուածոյն. նախ՝ մեծին Վարդանայ համատատ և խորին տեսութիւն, որ անշարժ մնայր միշտ, հոգացա լայտնի և ընդարձակ ցուցանել. Երկրորդ՝ զի ստացին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուիք. Երրորդ՝ ի թախանձանաց ոմանց հարկեցեալ, մանաւանդ որ տայ ամենայնի և յայտնեալ ու կամի: Եւ է պիտանութիւն սորա. նախ՝ ի մեծին Վարդանա դասի ընթերցմանց պայծառ տեսութեանց. այլև ի բան խորտու և քարոզութեանց, և լոծումն խնդրոյ հարցողաց. նաև ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսուղաց:

[Ե] բազում մեկնութիւն կրկին է գրեալ որպէս ողորմութիւն և ճշմարտութիւն և հաստուցումն և այն վասն կրկին պատճառի. նախ՝ որ էր յառաջին քաղուածուն և յերկրորդս գրեցա. և դարձեալ՝ դանդառլուու մտաց լուրջեալ անձանց և քառակին տե-

սութիւն ըստ հասակի տեսուղաց և ոչ ամենայն բանի, զի բոլորին մեկնութիւն բառացին գոցի և մասնաւորն ասա, զի ճրշմարտութիւն ճշմարտութեան ոչ ներկաւացից, որպէս ասէ իմաստուն ստորոգիչն աշխարհի:

Սոր, եթէ գոցի ինչ ի ամայ արժանի տեսութեան ձեր Տեառն շնորհի և վարժափրացն նախնի, և պակասն տկարութեան մերում ներեսից: Այլ և վարժապետին իմոյ Յոհաննոն Որոտեցոյ լիշտառկ բարի ի Տէր արձանացի. ընդ որում քաղութիւն բազմազան մեղաց մերոց և ծնալուցն կրկին, արեան մերձաւորաց և աշակերտաց, եղբալլարսէ կամաց ձերոց մաղթեսից, որ և գրել աղաշեմ զիմաստուն գաղափարուս սակաս լիշտառկի, որպէս և դուք գրեալ լիշտիք ի գիրն անշնչելի. և ձեզ լիշտուց ի բարի, և մեզ լուսուցն ի հոնի առնասարակ Տէրն ողորմեսից, ամեն եղիցի»:

Հիշտակարանի առաջին իսկ տողերը վկայում են, որ սա նեղինակի կատարած երկրորդ մեկնությունն է. «...Ակրասին հաւաքեցի զքաղուածոյն Մեկնութեան Սաղմոսացն Դաւթի...յախմ ամի ՊՇԴ (1405) թուի...», այսինքն՝ նախորդից 16 տարի նետու: Հետագա շարադրանքը բացահայտում է այս տարրերակի հորինման դրդապատճեները և նապատակը: Պարզվում է, որ Տաթևացուն նման քայլի մոլոր հիմնական շարժանիթը եղել է Վարդան Արևելցու համարնութ Մեկնությունը հրապարակելու, մատչելի դարձնելու անհրաժեշտությունը. «Մեծին Վարդանայ համատատ և խորին տեսութիւն, որ անշարժ մնայր միշտ, հոգացա լայտնի և ընդարձակ ցուցանել...»: Եկ իրոք, թեկուզ ոչ մանրախուզ քննությունը ցոյց է տալիս, որ Տաթևացին իր աշխատությունը կառուցել է Արևելցու Մեկնության հիման վրա: Ընդհանրությունն ի հայտ է զայիս հենց ներածականում, որը երկու հեղինակների գործերում էլ ունի Մի և Աստուած... (Կամ նախ մի է Աստուած...) սկիզբը: Հաջորդ էջերում Տաթևացին տալիս է Արևելցու առաջարանի մեկնությունը, որի ավարտին գրում է. «Մինչև ցայս նախերացն է Վարդանա: Նոյն ձեւով, վերջին մասում նա վերլուծման է ենթարկում Արևելցու հիշտակարանը: Նմանություն նկատվում է նաև բնագրում, իսկ, ընդհանուր առմամբ, Տաթևացու գործն աշքի է ընկնում ըստ կանոնների առավել որոշակի բաժանումներով, շատ ավելի ընդարձակ բացատրություններով, լուրաբաշուր կանոնի սկզբում հյութերի մանրամասն ցանկով, հաճախ նաև սաղմոսների

<sup>33</sup> Զեռագրում խորագիրի վերջին հատվածը նախորդում է և գեղեցիկ պիտառութեամբ խորչերին:

<sup>34</sup> Զեռ. № 1198, թիվ 267 թ:

տներին, գորդաներին, փոխերին վերաբերող սպառի բնութագրումներով:

Այսպիսով, միանգամայն հասկանալի է Վարդան Արևելցու անվան առկայությունը Գրիգոր Տաթևացու Մեկնության և խորագրում, և՝ հիշատակարանում: Այժմ տեսնենք, թե ինչ չափով և ինչպես է հեղինակի Մեկնության նորահայտ տարբերակը հարաբերում Բ տարբերակին: Վերջինիս հիշատակարանում հեղինակը միևնույն նյութին երկար ընդմիջումից հետո կրկին անդրադառնալու պատճառներից մեկը համարում է նախորդի համատուու լինելը. «Զի առաջին քաղուածոյն կարի կարծ և պակաս թուէր...»: Արդարն, Բ տարբերակը առաջին հերթին աչքի է ընկնուու իր պատկառելի ծավալով: Հիմնական ատաղձն, անշուշտ, առաջինում օգտագործված նյութըն է, ընդ որուու, շատ ենթագույններ երկու մեկնություններում տառացիորեն կըրկնուու են միմյանց: Նյութերի հաջորդականությունը ևս հիմնականում պահպանված է նույնությամբ. դա, մասամբ, պայմանավորված է Սաղմոսարանի, իբրև կանոնական ժողովածոյի, կայուն կառուցվածքով: 1405 թ. Մեկնությունը սաղմունները ներկայացնուու է ըստ ութ կանոնների, համապատասխան ցանկերով ու մեկնաբանություններով, իսկ նորահայտ բնագրում, ինչպես տեսանք, այդպիսի բան առնապարակ չկա:

Երկու մեկնությունների համեմատությունը ցուց է տալիս, որ շատ հատվածներ ընդարձակ տարբերակում արժանացել են առավել մանրակրկիտ քննությանը. բացի այդ, այստեղ հաճախ կատարված են հեղինակի նախընթաց մեկնությանը և նրա մյուս գործերին ու, մասնավոր, «Գիրք Հարցմանց»-ին ակնարկող համապատասխան հոդումներ: Սադակի հղում, ինչպես տեսանք, արված էր Վասն այսորիկ աւծզեկ Սաստուած... խորագրով նյութի վերաբերյալ: 1405 թ. բնագրում համեմատարար ծավալուն են ներկայացված, օրինակ, իմ, լ. Գ, Խ. Խ, Ծ. Ծ, Ղ. Ղ ենթագույնները<sup>35</sup>: Կան այնպիսիք, որոնք ունեն տարբեր շարադրանք (Ժ. Խ. Խ), իսկ մի քանիսը (Խ. Խ) Բ տարբերակում առնապարակ բացակայում են: Ուշագրավ է մասնավանդ այն, որ երկու մեկնություններում նույնությամբ (կամ թիշ տարբերություններով) կրկնված

շատ հատվածներ ընդարձակ տարբերակում խորագրված են իբրև քարոզ: Այդպիս են, օրինակ, Ի, ԻԱ, ԼԴ, ՀԲ, ՀԳ, ՀԶ, ՀԵ, ՀԹ, ԶԹ ենթագույնները<sup>36</sup>: Որպես կանոն, նորահայտ տարբերակում քարոզներ չկան ու եթե հիշյալ գլուխները հետագայում այդ անունն են ստացել առանց որևէ փոփոխություն կրելու, նշանակում է դրանք ունեցել են քարոզներին պատշաճող շարադրանք և ըստ այդմ ձեռք են բերել համապատասխան կիրառություն:

Ամփոփելով մեր խոսքը Գրիգոր Տաթեւացու «Սաղմուաց մեկնության» մասին, նշենք նաև այն հանգամանքները, որոնց թեկարդանքով նաև ստեղծեց իր երկու բնագրերը: Առաջին անգամ այդ գործին ձեռնարկելիս Տաթևացին պարզաբեր հետամուտ էր ցուց տալու ազգային ոգու և ավանդների պահպանաման անհրաժեշտությունը և բացատրելու, որ ողղադավան Եկեղեցուց հեռանալը կիններ ճակատագրական մասը: Դա, հավանաբար, հապենապով կատարված մի գործ էր, ուստիմնական մի ծրագիր: Բնագրի մի քանի օրինակների համեմատությունը, ինչպես տեսանք, որոց գլուխներում ի հայտ բերեց այնպիսի անհամարատախանություններ՝ բացքողություններ, հավելումներ, տեղաշարժեր, որոնք դժվար թե ձեռնարկական պատահական վրիպումներ լինեն: Ավելի ճիշտ կիննի մտածել, որ տվյալ դեպքում գործ ունենք ուսանողական լսարանների համար նախատեսված մի ձեռնարկի կամ դասախության հետ, ուր կատարված միջամտությունները բայց հարկի ու պահանջի փոփոխություններ էին, որոնց, անշուշտ, իրենց մասնակցությունն են բերել նաև Տաթևացու աշակերտները: Մի թե դրա վկայությունը չեն հեղինակային հիշատակարանում հանդես եկող Գրիգոր Չուղայեցու և Մատթեոսի անունները: 16 տարի անց, ստեղծագործական երկար ու բեղմնավոր ուղի անցնելուց հետո միևնույն նյութին անդրադառնախ հեղինակը, դարձյալ, առաջին հերթին ներկայանու է իբրև ուղղադավանության շերմեռանդ պաշտպան ու քարոզիչ: Բայց այժմ նա նկատի ուներ ընթերցողների ավելի լայն շրջանակ ու հետապնդում էր առավել որոշակի նապատակ, ինչպես հավաստում է գործի հիշատակարանը. ըստ այդմ, նյութն այս դեպքում ներկայացված է ամենայն խորությամբ ու են-

<sup>35</sup> Տե՛ս հոդվածին կից ներկայացված ներագրումների ցանկը, որը կազմված է նորահայտ Մեկնության օրինակների միման վրա: Բ տարբերակում դրանց համապատասխանող գլուխներն ունեն միամագամայն տարբեր թվահամար:

<sup>36</sup> Այս շարքին է պատկանում նաև ԺԳ գլուխ նախերգան խորագրով համեմատ ներկայացված է:

թարկված մանրազնին քննության: Այս տարրերակը նոյնական անաղարտ չէ, կաև խմբագրական միջամտությունները և, անտարսկուլս, իր ներթին ու իր չափով ունեցել է ուսումնակրթական նշանակություն: Այդ են վկայում քննագրում տեղ գտած քարոզները, կամնեների և առանձին սաղմուների վերաբերող բացատրական նշումները:

Ամսավասիկ այն հիմնական արդյունքները, որ ստացել ենք Գրիգոր Տաթևացու Սաղմուսաց մեկնության մեր կատարած ընդհանուր քննությունից: Այդ քննությունը, որ լույս է սփոռում հետինակի ստեղծագործական կյանքի լոկ մի դրվագի վրա, կրոկին անգամ ներկայացնում է նրան իբրև խորուն գիտնական, հմտու մանկավարժ, խորամիտ քաղաքագետ և ազգային ավանդների նախանձախնդիր: Առավել խոր ու հանգամանակից հետազոտությունն աներկրապրեն պիտի բացահայտի ուշադրության արժանի այլ առանձնահատկություններ և մեծ ուսուցչապեսի դիմանկարը պարզաբանող նոր գծեր:

#### [ՑԱՆԿ ՆԻՒԹՈՒՅՑ]: ԱՅՍ ԻՆՉ Է Ի ՍՄՄՁ\*

- Ա. Ոչ յարիցեն ամբարիշտք (Ա, 5)
- Բ. Ընդ առաօտու լուիցես (Ե, 4)
- Գ. Ի փայլատակել նորա (ԺԵ, 13)
- Դ. Որպէս փեսայ զի եղան (ԺԸ, 6)
- Ե. Զի՞նչ է միամօրութիւն (ԻԱ, 21)
- Զ. Որո՞վ զանազանի օրինեալն և գովեալն
- Է. Զի՞նչ են փառք և զի՞նչ պատի?\*\*
- Ը. Որո՞վ զանազանին պատկառանք և ամօթ:
- Թ. Որո՞վ զանազանին ուրախութիւն և ցնծութիւն
- Ժ. Ես առ Աստուած կարդացի (ԾԴ, 18)
- ԺԱ. Եսուր երկիրածաց քոց նշան (ԾԹ, 6)
- ԺԲ. Համբարձից զձեռու իմ (ԿԲ, 5)

\* Սույն ցանկը կազմել ենք Մեկնությունը բովանդակող բոլոր ձեռագրերի հիման վրա, ցանկ չունեցող օրինակների դեպքում օգտվելով բնագրային խորագրերից: Նյութերը ներկայացրել ենք որոշ խմբագրամբ և ըստ հնարավորին ամփոփ ու հակիրճ, աշխատելով չխարթարել իմաստային ամբողջականությունը. Կից, փակագծերի մեջ, նշել ենք համապատասխան սաղմոսի թվահամարը և տունը, բացառությամբ այն ենթագրութերի, որոնք չեն կապվում որոշակի սաղմոսի որոշակի տաճ հետ:

\*\* № 1181 ձեռագրում այս ենթագլխին նախորդում է միննույն թվահամարով հանդես եկող Վասնայսորիկ օծ գքեզ Աստուած... խորագրով նյութը:

ԺԳ. Անցաք մեք ընդ հոր և ընդ ջոր (ԿԵ, 12)

ԺԴ. Ծանաչել զմանապարիս քո (ԿՁ, 3)

ԺԵ. Ծանապարի արարեք ընդ արևմուսու (ԿԷ, 5)

ԺԶ. Զիներս կարճնովին (ԿԷ, 22)

ԺԷ. Զի՞նչ է առաւելութիւն բանական

ԺԸ. Զի՞նչ է բարկութիւն և սրտմտութիւն

ԺԹ. Զի՞նչ է նախատեղն

Ի. Ցանկարծակի սատակեցան... երազ է կեանքս (ՀԲ, 19—20)

ԻԱ. Սեղան քո, Տէր զօրութեանց (ԶԳ, 4)

ԻԲ. Զի՞նչ է ողորմութիւն և ճշմարտութիւն (ԶԸ, 2—51, Անս՝ ՂԵ, 2—3)

ԻԳ. Ընդէ՞ր ոչ գիտէ մարդ զկատարած կենաց իր

ԻԴ. Ընդէ՞ր է զի նախահարքն երկարակեացք եին և մեք սակա

ԻԵ. Արդարքն որպէս զարմանենիս (ՂԱ, 13)

ԻԶ. Տանաղեաւ սաղմոսարանաւ (ԼԲ, 2, ՂԱ, 4, ԾԽԳ, 9)

ԻԷ. Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ (ՂԲ, 1)

ԻԸ. Վասն է՞ր հոր գա առաջի (ՂԶ, 3)

ԻԹ. Ի գոյիցս ո՞րք են որ մնան յետ յարութեան

Լ. Երկիր պագէք պատուանդամի ոտից նորա (ՂԸ, 5)

ԼԱ. Աւուրք իմ որպէս հովանի (ԾԱ, 12)

ԼԲ. Օրինեա, անձն իմ, զՏէր (ԾԲ, 1)

ԼԳ. Վասն է՞ր ասէ. Արարեք զխաւար (ԾԳ, 20)

ԼԴ. Առաքեա զոգի քո (ԾԳ, 30)

ԼԵ. Վասն է՞ր խոստացաւ Արրահամու (ԾԴ, 9)

ԼԶ. Վասն է՞ր է զի Աստուած նախ զայս խոստանայ

ԼԸ. Զի՞նչ է անդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան

ԼԸ. Վասն է՞ր հրամայեաց Աստուած դաւանել

ԼԹ. Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է (ԾԵ, 1, ԾԶ, 1)

Խ. Որպէս զանազանին մեղք, անօրէնութիւնք, յանցանք

ԽԱ. Զի՞նչ են դրունք պղնձի և նիգ երկարի (ԾԶ, 16—17)

ԽԲ. Որո՞վ զանազանի նեղութիւն և վիշտ (ԾԶ, 19)

ԽԳ. Զի՞նչ է կեցոյցն և ապրեցոյցն (ԾԶ, 20, 28—29)

ԽԴ. Զի՞նչ է հողմ և մրրիկ (ԾԶ, 25)

ԽԵ. Քրիստոս հրամայէ օրինել զանձիծիչս և մարգարէն անհծանէ:

ԽԶ. Վասն Է՞ր լիշտակ մեռելոց ասեմք զԱնիծքն (ԾԺԸ, 1)

ԽԷ. Զի՞նչ է օրէնք և պատուիրանք (ԾԺԸ)

ԽԸ. Մածաւ որպէս կաթն (ԾԺԸ, 70)

ԽԹ. Արարի իրաւուն և արդարութիւն (ԾԺԸ, 121)

Ծ. Վասն Է՞ր Աերէ Սատուած չարեաց

ԾՍ. Վասն Է՞ր Սատուած զԱղամ ի դրախտն եղ

ԾԲ. Ցորժամ արար իրաւուն և արդա-

րութիւն (ԾԺԸ, 135)

ԾԳ. Զքերան իմ բացի (ԾԺԸ, 181)

ԾԴ. Եօթն անգամ յաւոր օրինեցից (ԾԺԸ, 184)

ԾԵ. Մոլորեցայ ևս որպէս զոշխար (ԾԺԸ, 176)

ԾԶ. Քանի՛ են եղանակք նախախնամու-

թեան

ԾԷ. Զի՞նչ օգուտ է նեղութիւն

ԾԸ. Զի՞նչ է նետք հզօրի (ԾԺԸ, 4)

ԾԹ. Զի՞նչ նշանակէ ասելն. Վայ է ինձ (ԾԺԸ, 5)

Կ. Համբարձի զաշս իմ ի լերին (ԾԻ, 1)

ԿԱ. Վասն Է՞ր երթամք յԵրուսաղեմ (ԾԽԱ, 1)

ԿԲ. Վասն Է՞ր փորձութիւնս ուղխաջոր

կոչէ (ԾԻԳ, 5—6)

ԿԳ. Զի՞նչ է ասելն. Ո յուսայ ի Տէր (ԾԻԴ, 1)

ԿԴ. Զի՞նչ նշանակէ յերիս ժամանակս

ազատութիւն ի Բարելոնէ

ԿԵ. Զի՞նչ է որ ասէ. Վասն մարդոյս

բնութեան քաղաք է մեծ և պատուական

ԿԶ. Զվատսակս ձեռաց քոց կերիցես (ԾԻԵ, 2)

ԿԷ. Որթ կոչի Քրիստոս և այգի՝ եկեղեցի (ԾԻԵ, 3)

ԿԸ. Խոնարհեցայ որպէս մանուկ սար-

տուցեալ (ԾԼ, 2)

ԿԹ. Զի՞նչ է որ զմարդկութիւն ուոք կո-

չեն

Հ. Զի՞նչ է որ ասէ. Երկիր պագտոր ի

տեղուց ուր կացեալ են ուոք նորա (ԾԽԱ, 7—8):

ՀԱ. Զի՞նչ է խոստումն, ովստն և երդու-

մըն

ՀԲ. Արի, Տէր, ի հանգիստ քո (ԾԽԱ, 8)

ՀԳ. Քահանայք քո զգեցցին զարդարու-

թիւն (ԾԽԱ, 9)

ՀԴ. Զի՞նչ է որ ասէ. ի պտղոյ յորովայ-

ձէ նորա (ԾԽԱ, 11)

ՀԵ. Վասն Է՞ր եղջիր կոչի և ճրագ (ԾԽԱ, 17)

ՀԶ. Զի՞նչ է բարի կամ զի՞նչ վայելուշ (ԾԺԸ, 1)

ՀԵ. Որպէս իող զի իշանէ ի գլուխ (ԾԼԲ,

2)

ՀԸ. Ասս օրինեցեք ամենայն ծառայք (ԾՂԳ, 1)

ՀԹ. Ի գիշերի համբարձէք զձեռս (ԾՂԳ, 2)

Հ. Եթէ ընդէ՞ր մի է աշխարի և ոչ բա-

զում

ՀԱ. Տէ՞ր, փորձեցեր զիս և ծանեար (ԾԼԸ, 2)

ՀԲ. Դու ստեղծեր զիս և եղիր զձեռն քո (ԾԼԸ, 5)

ՀԳ. Խաւար նորա որպէս զլոյս նորա (ԾԼԸ, 12)

ՀԴ. Զանգործս իմ տեսին (ԾԼԸ, 16)

ՀԵ. Զի՞նչ է գտակը չարեաց

ՀԶ. Վասն չար գազանաց (ԾՂԹ)

ՀԸ. Ասպաւնք ի նեղութեան ծամու (ԾՂԹ, նաև ԾԽԱ, 3)

ՀԸ. Հովանի գիլոյ իմոյ (ԾՂԹ, 8)

ՀԹ. Ուղիղ եղիցին աղօթք (ԾԽԱ, 2)

Դ. Տէ՞ր, հան ի բանտէ զանձն իմ (ԾԽԱ, 8)

ԴԱ. Ուսուց զձեռս իմ ի պատերազմ (ԾԽԳ, 1)

ԴԲ. Անվախճան է թագաւորութիւն Աս-  
տուծոյ (ԾԽԴ)

ԴԳ. Զի՞նչ է բանալ ձեռացն Աստուծոյ (ԾԽԴ, 16)

ԴԴ. Օրհնեցէք զՏէր յերկնից (ԾԽԸ, 1)

ԴԵ. Ի Մեծացուցացն

ԴԶ. Թէ որպէս օրինեն արարածք զՏէր (ԾԽԸ)

ԴԷ. Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան (ԾԽԸ, 5)

ԴԸ. Եկեղինք բարձունք և ծառք (ԾԽԸ, 9)

ԴԹ. Եղբայրք իմ մեծամեծք (ԾԸԱ, 5—6)

Է. ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ԱԽԸ ԶՔԵԶ  
ԱՍՏՈՒԱԾ, ԱՍՏՈՒԱԾ ՔՈ ՔԱՆ  
ԶԸՆԿԵՐՈՒ\*

(ԽԴ, 8—9, նաև՝ Եթր. Ա, 9—10)\*\*

[Լ]ոյս ի լուսոյ ասեն զԲանն Աստուծոյ ի Հօրէ ծմելոյ և՝ ամենայն աստուածաշոնչ գիրք, և՝ ոգէնուաստ վարդապետք ըստ ալ-Արմ որ ասէ մարգարէն՝ Լուսով երեսաց տեսանեմք զլոյս (Սաղմ. ԼԵ, 10—11).

\* Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. № 1131, թերթ 65ա—68ա:

\*\* Եթրն խորագիր օգտագործված նախադասութիւնը քաղված է հետևյալ պարբերությունից. «Սիրեցիր զարդարութիւն և ատեցիր զանօրէնութիւն»:

և ինըն Տէրն՝ Ես լոյս յաշխարի եկի (Յովի. ԺԲ, 46). և սուպեալ յերրայեցոց՝ Որ է լոյս փառաց և մկարագիր էութեան նորա (Երր. Ա, 3). և ի դաւանութիւն հաստոյ՝ Աստուած յԱստոծոյ, լոյս ի լուսոյ; Եւ վասըն բազում պատճանի ըստ համեմատութեան լուսոյն առ ճառագայթ իր. [Ա]այս վասն պարզութեան, զի մի՛ տեսցէ ախտ ինչ և ի մարմնական աստուածային ծնընդեան, որպէս ոչ է ի մէջ լուսոյն և ճառագայթին իրոյ, զայսուիկ ասէ երանեաին Կիրեղ ի Գիրս Պարապմանց // (65թ).

բ) զի անձառելի է որպիտութիւն արձակման լուսոյն, ասէ, և Տէրն մեր ոչ ոք գիտէ զիայր թէ ոչ որդի, և անդրադարձի. գ) զի ի լուսոյ ճառագայթն իրը ի պատճանէ, և Տէրն եկ ի Հայրէ և եկն յաշխարիս. դ) զի անմիշոց ժամանակի է ծագումն լուսոյն, սոյնայէս՝ Ի սկզբանն էր Բանն (Յովի. Ա, 1) ասէ աւետարանիշ Յովիաննեւ. ե) զր որպէս անքածանելի է լուսոյն, Բանն էր առ Աստուած (Յովի. Ա, 1—2), ասէ. զ) զի մի բնութիւն է ամեննին լուսոյն և ճառագայթն իրոյ, և վասն Որդոյ վկայէ՝ Աստուած էր Բանն (Յովի. Ա, 2). է) զի որպէս լոյսն և ճառագայթն են ի միմեանց ըստ եռթեան, սոյնայէս Հայր և Որդի, որպէս ասէ՝ Հայր ի յիս և ես ի Հայր (Յովի. Ժ, 38), և՝ Որ եսես զիս՝ [Ետք]ես զՀայր իմ (Յովի. ԺԴ, 9), և թէ՝ Ես և Հայր իմ մի եմք (Յովի. Ժ, 30). ը) զի որպէս եղանակա ինչ է եացուցիչ լուսոյն ճառագայթն, սոյնայէս և Բանն մկարագիր է էութեան Հայր, որպէս ասէ առաքեալն. թ) զի այլ է առանձնապէս լոյսն և այլ՝ ճառագայթ իր ի նոյն էութեան. սոյնայէս և այլ է ըստ առանձնաւորութեան\* Հայր և այլ՝ Որդի ի միում էութեան գոլով. ժ) զի որպէս առ լոյսն ձգէ զճառագայթն զիայնեցուած տեսողացն, նմանապէս և Որդի Որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն որ առաքեաց զիս (Յովի. ԺԲ, 44—45), և այն: Եւ դարձեալ՝ Ոչ ոք գայ առ Հայր՝ թէ ոչ ինըն (Յովի. ԺԴ, 6—7) որոյ ի դէմս ասէ հախագուշակ մարգարէն՝ Աւծ զքեզ Աստ-

Վասն պատրիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո, խողվ ուրախութեան առաւել քան զընկերս քո»: Բնագրում նեղինակը Բանակի է անդրադառնում այս պարքերության առանձին հատվածներին, որոնք ներկայացրել ենք շեղագրով, առանց սակայն նշելու աղբյուրը: Բնագրում հանդես նկող աստվածաշնչական մյուս քաղածոները նույնպէս շեղագրով են, իսկ կից փակագծերում նշված են աղբյուրները: Ուղղագրական միջամտություններ, որպէս կանոն, չենք կատարել:

\* առանձնաւորութիւն=միայնութիւն, միակություն:

ուած, Աստուած քո, զոր մեր ուսաք զիանն նախ՝ ի դէմս տնարենութեան Քրիստոսի, և ապա՝ որ ի շնորհացն աւծեալը կոչեցան, յաղագու որոյ ասէ՝ օծ զքեզ: Զայս խորհեսցի իրաքանչիւրք ի ձեւնց, որ և ի Քրիստոս, ասէ առաքեալն ի Փիլիպէ: Եւ գիտեի է զի ի մէջ եկեղեցնաց Ե (5) կարծիս կայ վասն միասորութեան Քրիստոսի. զի ոմն չարաշար բաժանէ և ոմն վատթար միասորէ. Բ—լք (2) յաշ և յամեակ խոտորումն ի ճշմարտութենէ. իսկ մինն՝ որ է միջինն, ուղեղընթաց աստուածպաշտութեան:

Սուաշին խոտորումն՝ Նեսորորին, որ բաժանեաց զՔրիստոս լ—Բ (2) բնութիւնն և Բ (2) անձին, և կրկին կամք և ի գործ։ սոյնպէս ասաց թէ՝ Գոյացութիւն մարդոյն նախ, և ապա եկեղեց Բանն Աստուած բնակեցաւ ի մարդն և նովա կատարեաց զտնօրինութիւնն. ըստ այնմ կարծեացն ոչ է մարմնացեալ, այլ որպէս ի մարգարէն՝ բնակութեամբ է: Եւ այլք աշակերտը նորա որ ի ժողովն Քաղկեդոնի ասացին՝ Զանձն միացեալ և զընութիւնն ոչ միասորեալ, այլ մարդն յանձն բանին կարացեալ, այլ ոչ նովա գոյացեալ: Եւ սորա ոչ ասեն զմիարեալ, այլ ամեննին ամենայն իրօք զնեսորորին խորին, բայց յայնանէ մի ասեն զանձն պատրանօք, և լԲ(2) Որդիս և յերկուս բնութիւնն բաժաննեն, որպէս միագլուխ վիշապ և Բ(2) տրտուն ունելով, և որպէս միոյ գլխոյն Բ(2) ձեռու ունելով բաժանի ի միմեանց: Այս է չարաշար բաժանումն երկարեակաց աղանդոցն:

Իսկ որ վատթար միասորեն, որպէս Եւ տիքէս, զի շիոթեալ ասաց՝ Զընութիւնն որպէս ալւը և ջուր և գինի, զի ոչ պահեն զորակութիւն բնութեանց. սոյնայէս և նա զՔրիստոս կարծէր: Եւ այս՝ խոտորումն է ի ճշմարտութենն, իսկ ուղիղն ունի զաստուածպաշտութեան դաւանութիւնն, փախսելով ի Քաղկեդոնէ: Երկարեակացն և յետիքէս, որպէս և այժմ մեք, եկեղեցին Հայաստանեաց, սոյնպէս դաւանեմք զՔրիստոս Աստուած մարդացեալ, անշփոթ և անքածանելի միասորութեամբ: Աստուած մարդացեալ ասելն ցուցանէ լԲ-ոց (2) զՔրիստոս, անշփոթ պահէ զաստութիւն բնութեանցն. անքածանելին՝ խառնումն բնութեանցն ի մի դէմս և ի մի անձնաւորութիւնն, զի խակոյն, ընդ յիշանել Բանին յարգանդ Կուսին եղն՝ ա) բաժանումն արեան, թ) թանձրանալն, զ) ձեռանալ, դ) հոգևորի, ե) աստուածանալ, և այն՝ ի սույ ժամանակի եղն առեալն իրոն զառողն զոյց Աստուած՝ նոր խառնումն և զարանչելի խառնած ըստ Աստուածանին, զոր և զիստոնում զայս «օ-

ծումն» անուանէ մարգարէս ասելով՝ Վասն այսորիկ օծ զքեզ. և Պետրոս ի Գործքն զնա՝ Տէր և Անձեալ Աստուած արարեալ (Գործք. Բ, 56), և ասէ. իսկ եթէ օրինակ խնդրես, տես զմհաւրութիւն հոգուոյ ընդ մարմնոյ. նախ՝ զի որպէս հոգի բոլորն ի բոլորին է և բոլորն ջիւրաքանչիւր մասըն, սոյնպէս և Բանն Աստուած բոլորն ի բոլոր մարմննն է միաւրեալ, և բոլոր Բանն Աստուած ջիւրաքանչիւր մասն մարմնոյն, որպէս ասէ առաքեալն՝ Ի նմա բնակէ լրումն աստուածութեան մարմնապէս (Կողոս. Բ, 9—10), որ է էապէս. թ) զի այլ և այլ բնութեան միաւրեալ՝ մի անձն, մի դժմք և մի է բնութիւն Բանին Աստուածոյ մարմնացելոյ, որպէս ասէ սուրբն Կիրեան. գ) զի բաժանելն ի միմեանց ոչ զոյ մարդ, այլ կամ մեռեալ մարմին, կամ մերկ հոգի. նոյնպէս և զորշելն Աստուած և զմարդոն ոչ է Քրիստոս, այլ կամ մարդ սուկ // (Եթա), կամ Աստուած մերկ. դ) զի որպէս մարմին զգայական միաւրելով ընդ բանականին հոգոյ ոչ է, և ոչ ասի զգայական, այլ բանական մարդ, սոյնպէս և մարդկային բնութիւն միաւրելով Բանին Աստուածոյ, գիտէ զամենայն աստուածաբար.. ըստ այնմ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր (Յովի. Ժ, 15). ե) զի որպէս ծնունդն միաւրութեանս մերոյ ոչ ասէ մարմին ծնանի, այլ թէ՝ Մարդ ծնաւ յաշխարհ (Յովի. ԺԶ, 21—22) ըստ Տեսորն, նմանապէս ասիմ այս անոն մարդ ճանաչեալ և մեռեալ, որ և յատուկ մարմնոյն սորա. սոյնպէս և զծնանիլ փրկչին Աստուած մարդացեալ և զծնեալն Աստուածածին դաւանիմք, և զշարչարանք և մահ Աստուածոյ խոստովանիմք, և մարդացելոյ դաւանիմք, որով փրկեցաք յամենեքեան համեմատութեան, իսկ այսու անհամեմատք. նախ՝ զի միաւրութիւն մարդոյս յեղանակաց է ընդ միմեանս, իսկ փրկչին՝ բոլորեցունցն ամեն ընդական\* է. թ) զի հոգին և մարմին գոյակիցք են միմեանց անընդհատ ժամանակաւ, իսկ Բանն Աստուած է անսկզբնաբար ի Հայրէ, և յատոյ սկսեալ ի Կոսէն, ըստ առաքելոյն՝ Իրքն եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդին իր, որ եղս ի կնոշէ և եմ[ոտ ընդ օրինօք] (Գաղ. Դ, 4—5). գ) զի հոգին միաւրիլ ընդ մարմնոյն երթեմն, զի որոշի և դարձեալ միանայ, իսկ Բանին Աստուածոյ քաջ սիրով եռացումն ընդ մարմնոն [1], անքածն և անորոշ գործեալ միաւրութիւն, ուստի յայտ է զի էր ընդ

\* ընդական=նայացք ական՝ քաղցր կամ պաշտպանողական:

մարմնոյն ի գերեզման, և էր ընդ հոգուոյն ի դժոխս իշեալ. դ) զի ի մարդն է միաւրութիւն սոյնպէս հոգոյ և մարմնոյ, իսկ Քրիստոս նուակի միաւրութիւն առաւել իմն քան զմերս, սոյնպէս Աստուածոյ ընդ հոգուոյ, հոգոյ ընդ մարմնոյ և Աստուածոյ ընդ մարմնոյ. ե) զի հոգին միաւրիլ ընդ մարմնոյ, է միայն ի մարմնումն էութեան, և ոչ այլ որեք, թէպէտ մտօք ի բազումս տեսանեմք, իսկ Բանն Աստուած մարդացեալ է էութեամբ առ Հայր պահպանութեամբ ի բոլոր էական շնորհօք յամենայն սորրու, և բնութեամբ ի մարմնի միաւրեալ, յաղագ որոյ ասէ մարգարէս՝ Վասն այսորիկ ամ զքեզ:

Եւ զի ճշմարիտ Աստուած է Քրիստոս ընդ մարմնոյն միաւրութեան, ցուցից և զայս սակա ինչ վկայութեամբ ի Սուրբ Գորոց, սոյնպէս և նա փրկիչ բոլորեցունց միայն Աստուած է ըստ Եսայէա [1]. Տէր փրկիչ մեր՝ և նա փրկէնսցէ] (Եսայի. ԼԳ, 22—23): Եւ հրեշտակն աւեր առ Յովսէի՝ Կոչեցից զանոն նորա Յիսուս, որ է փըրկիչ և նա փրկեսցէ զժողովուրդ իր ի մեղաց իրեանց (Մատթ. Ա, 21—22). թ) զի զիտորիուրդ սրտից գիտել միայն Աստուածոյ է ըստ մարգարէին՝ Ո ստեղծ առանձին զիրտս նոցա (Սաղմ. ԼԲ, 15), և ի միտ առնելով զամենայն գործս նոցա աւետարանիչ ասէ՝ Գիտաց Յիսուս զխորհուրդ նոցա և ասէ. Զի՞ խորհիք ի սիրտս ձեր (Մատթ. ԺԶ, 8). զ) Աստուածոյ միայն է թողով զմենս, ըստ այնմ ոչ ոք կարէ թողով զմենս թէ ոչ նու Աստուած և ինքն, զի Որդին ասէր՝ Խշանութիւն ունիմ յերկրի թողով զմենս (Մատթ. Թ, 6: Մարկ. Ա, 10: Ղուկ. Ե, 24), և՝ Քեզ ասեմ՝ թողեալ լիցին քեզ մեռք (Մատթ. Թ, 2, 5: Մարկ. Բ, 5, 9: Ղուկ. Ե, 20, Է, 48). դ) ամենին սրբութեամբ և արդարութիւն Աստուածոյ միայն է, ըստ այնմ ոչ գոյ սուրբ որպէս զՏէր, և ոչ արդար որպէս զԱստուած մեր, և մարգարէն ասէ լաւս Որդու՝ Ոչ արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն ի բեր[ան նորա] (Ա. Պետր. Բ, 22—23), որպէս և ինքն ասէ՝ Խշան աշխարհին յիս ինչ յիրացցն ոչ գտանէ (Յովի. ԺԴ, 30—31). ե) Բանն Աստուածոյ Աստուած է, ըստ այնմ ի Ալքրանել էր Բանն և Աստուած էր Բանն (Յովի. Ա, 1—2), իսկ Յոհաննէնէս ասէ՝ Զեռք մեր շօշափեցին զբան կենդանի (Ա. Յովի. Ա, 1). և Թումա շօշափեաց Տէր և Աստուած դաւանելով. զ) Տէր փառաց Աստուած միայն է բնութեամբ, ըստ այնմ Տէր Սարաւօք՝ այս անուն է նորա, և առաքեալ ասէ թէ՝ Էին ծանուցեալ ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանեին (Ա.

Կորնթ. Բ, 8). է) Ե նատի ընդ աշմէ Աստուծոյ, այսինքն՝ ի փառս աստուածութեան Աստուած միայն վայել է, ըստ այնմ՝ Ասսաց Տէր ցՏեառն իմոյ, նիստ ընդ աշմէ իմմէ մինչև [եղից] (Սարկ. ԺԲ, 36: Գործք. Բ, 34—35): Եր առաքեալն ասէ՝ Մանաւանդ յարուցեալ իսկ է, և է ընդ աշմէ Աստուծոյ (Հռոմ. Ը, 34): Եր Ստեփանոս՝ Ամա տեսանեմ զերկինս բացեալ և գորդի մարդոյ զի կայ [ընդ աշմէ Աստուծոյ] (Գործք. Է, 55—56). ը) և կենաց ծնոյ Աստուած միայն է, ըստ այնմ ևս սպանենմ և ես // (66թ): Եր ինքն Տէրն ասէ՝ ես իսկ եմ յարութիւն և կեամք (Յովհ. ԺԱ, 25): Եր դարձեալ՝ Որք ի գերեզմանն կացցեն, լսիցեն ձայնի Որդույն Աստուծոյ և եկեցեն (Յովհ. Ե, 28—29), որոց և նախ գլազար ի վեր կոչեն[ա]ց. թ) իսկ երկրպագութեամբ պաշտամն՝ Աստուծոյ միայն վայել է. ըստ այնմ՝ Տեառն Աստուծոյ բռն երկիր պացեն և զեա միայն պաշտեսցեն (Մատթ. Դ, 10—11): Եր առաքեալն ասէ՝ Յանուան Յիսուսի Քրիստոսի ծունք կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց (Փիլիպ. Բ, 10). ժ) դատել և գործ հաստուցանել Աստուծոյ միայն է, ըստ այնմ՝ Աստուած դատար արդար, հզոր (Սահմ. Է, 12). և իմ է վրեժմներութիւն (Հռոմ. ԺԲ, 19), և ինքն Տէրն ասէ՝ Ոչ թէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստանն ես Որդոյ (Յովհ. Ե, 22—23): Եր առաքեալն եր մեզ ամենեցուն յանդիման կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալիցին իրով մարմնով զոր ինչ գործեսցէ՝ թէ՛ բարի և թէ՛ չար (Բ Կորնթ. Ե, 10), որոյ ի դէմ ասէ մարգարէ[ն]՝ Վասն այսորիկ ած զքեզ:

Եթէ տեսցուք թէ զի՞նչ նշանակէ ածեալ անուն, և թէ որքանարար ասի ածումն: Գիտելի է զի ածեալն ի լեզու Երրայեցոցն «մեսիա» թարգմանի, իսկ ըստ Հոռոմին՝ Քրիստոս, իսկ ի մերս՝ օծեալ, որպէս և ասէ մարգարէմ՝ Ասծ զքեզ Աստուած, Աստուած: Այս՝ ըստ Ժ յեղանակի է ածումն. նախ՝ ածումն մարմնականք, որպէս փակիւասիրացն. թ) օծումն պատրագմական լրմ[թ]շամարտիցն. զ) մարդրական, որպէս հիանդացն. դ) ածումն զմրոյ, որպէս մեռելոցն. ե) ածումն քահանայիցն վասն միջնորդութեան. զ) ածումն թագաւորաց վասն տէրութեան. է) ըստ զարութեան, որպէս Կիրոսին. ըստ Եսայեայ՝ Սոյնակս ասէ Տէր ցածեալ իր ցկիրոս (Եսայի ԽԵ, 1). ը) օծումն Հոգույն Սրբոյ, որպէս մարգարէիցն՝ Մի՛ մերձենալը յածեալս իմ, և ի մարգարէս (Սահմ. ԾԴ, 15). զ) ածումն հաւատացելոց մկրտութեամբ ատազնին. դ) ասի ածումն բռնաւորաց և աշխարհակալաց առ ի յուղութիւն ոմանց ի Տեառնէ ապրուամբելոց, զոր առնու Աստուած զոմանս ի ձեռն և տա[ն] համարձակութիւն իշխանութեան, որպէս ասէ մարգարէմ՝ Այսպէս ասէ Տէր զԿիրոս (Եսայի. ԽԵ, 1). զի թէ՛ պէտ կուպաշու եր, յԱստուծոյ ուներ զիշխանութիւն թագաւորութեան. ե) օծումն արեամբ որպէս մարտիրոսաց, որ պասկեցան ի Քրիստոսէ. զ) ճշմարիտ Քրիստոսի ածումն է, որ օծալ // (67ա) մարդկային

յորդեգրութեան, որպէս մկրտութիւն. ժ) օծ[ումն] գերագոյն, ասաց, բնութեան միաւորութեան, այսինքն Բամին Աստուծոյ ընդ մարդկութիւնն: Եր զի միաւորութեամբ բնութեանց իմանի Քրիստոս, յայտ է զի որոշեալն ըստ ոմանց ոչ մնա[ն] Քրիստոս, իսկ Քրիստոս վասն իր ընկալաւ զամենեսեան զայսոսիկ զածումն մարմնական ի պոռեկի կնոշէն, յորժամ երեր\* զշից եղոյն ի գլուխ նորա. ըստ այնմ որ ասէ առ Միմոն՝ Մտի [ի] տուն քը ջոր, [ոտից իմոց] (Ղոկ. Է., 44). Սա արտասօք երաց զոտս [իմ] (Ղոկ. Է. 44). իսկ օծումն լըմբամարտութեան, յորժամ վերացաւ հոգովն յանապատրն ի սատանայէ, որ և յաղթեաց հակառակամարտին բնութեան մերոյ. իսկ օծ[ումն] հիանդաց եցոյց ինքեամբ յալլս, յորժամ զամենալն ի ձեռս աւագակացն կանգնեաց, և ծիթով և զինով բժշկեաց զվերս. իսկ օծումն մեռելո[ն], յորժամ թաղեցաւ. իսկ օծումն քահանայութեան՝ ի Թարօր լերին, որ ասացաւ՝ Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ համեցայ (Մարկ. Ս, 11: Ղոկ. Գ, 22—23): Եր Սուրբ Հոգին ամբիովանի, և Մովսէս և Եղիայ սարկաւագէին նամ. իսկ ածումն թագաւորական ի Մարեմայքն Ղազարու, և յորժամ նստաւ ի վերայ յովանակի. իսկ ածումն զօրութեան, յորժամ ածաւ արեամբն ի վերայ խաչին և էտ աւար. իսկ օծումն Հոգոյն Սրբոյ, յորժամ էշ Հոգին աղանակերայ և հանգեաւ ի վերայ նորա. իսկ մկրտութիւն նորա ոչ թէ յորդեգրութիւն եր որպէս և մերս, այլ ճշմարիտ յորդիրութեան յայտնութեան, ըստ այնմ՝ Դա է Որդի իմ սիրելի ընդ [որ] համեցայ (Մատթ. Գ, 17: Բ Պետր. Ս, 17):

[Ե] տեսցուք թէ քանի՛ են եղանակ ածմանն. նախ՝ զի եղոյլ ածանեին, որպէս քահանան և թագաւորք. թ) օծանեին մարգարէքն այլ ոչ եղով, այլ և ինան[ա]-լարայ Հոգովն Սրբով, որպէս ասէ՝ Մի՛ մերձենալը յածեալս իմ, և ի մարգարէս (Սահմ. ԾԴ, 15). զ) ածումն հաւատացելոց մկրտութեամբ ատազնին. դ) ասի ածումն բռնաւորաց և աշխարհակալաց առ ի յուղութիւն ոմանց ի Տեառնէ ապրուամբելոց, զոր առնու Աստուած զոմանս ի ձեռն և տա[ն] համարձակութիւն իշխանութեան, որպէս ասէ մարգարէմ՝ Այսպէս ասէ Տէր զԿիրոս (Եսայի. ԽԵ, 1). զի թէ՛ պէտ կուպաշու եր, յԱստուծոյ ուներ զիշխանութիւն թագաւորութեան. ե) օծումն արեամբ որպէս մարտիրոսաց, որ պասկեցան ի Քրիստոսէ. զ) ճշմարիտ Քրիստոսի ածումն է, որ օծալ // (67ա) մարդկային

\* Պետր է լիմի երեկ:

բնութիւն աստուածութեամբն փրկիչ աշխարհի. իսկ ածաւ բնութեամբ, միաւորութեամբ ընկալաւ Քրիստոս ի կուսական յարգանդէ, ուր և խառնեալ միացոյց զմբք բնութիւնն ընդ յիւրում աստուածութեան, և ծնաւ մարդ որ է Քրիստոս, որ թարգմանի «Աւծեալ» ըստ հրեշտակին՝ Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի (Ղուկ. Բ, 11), որպէս ասէ մարգարէն Դաւիթ թէ՝ Վասն այսորիկ ածքեզ:

[Բ]եր տեսցոյք թէ ո՞վ են ընկերք սորա և կամ թէ զի՞նչ առաւելութիւն ածումն Քրիստոսի քան զընկերաց նորա, վասն որոյ ասէ՝ Առաւել քան զընկերս քո: Ընկերք կոչին մարգարէրն և քահանային և ամենայն ածելոց դասք, և զի որպէս մարդանալովն ընդ մեզ, մեր հաւասար մարդկութիւն «Եղբարք» անուանեցաք, ըստ այնում պատմեցից զան\*. սոյնական դասք ածելոցն «ընկերք» անուանեցան ճշմարտելոյն Քրիստոսի. իսկ առաւելութիւն ածման Քրիստոսի. նաև՝ զի վեր ասացեալ ժեղանակ ածութեան բովանդակապէս ոչ այլ ումեր պատշաճի, բայց միայն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս ցուցաւ. թ) զի նորա մարդիկ էին և յԱստուծոյ օծեցան, իսկ Տէրն մեր Քրիստոս՝ Աստուծ և յԱստուծոյ օծեաւ, որպէս ասէ մարգարէն՝ Ան զքեզ Աստուծ, Աստուծ. զ) զի նորա ժամանակաւոր ածումն ընկալան յոր ինչ և կոչեցան, իսկ ի դէմն Տեառն մերոյ ասէ հայր՝ Դու ես քահանայ յափիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի (Սաղմ. ԾԹ, 4). դ) զի նորա ի մարմնական նիւթոյ, այսինքն՝ եղու ընկալան զածումն, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ի Հոգույն Սրբոյ, որպէս ասէ Պետրոս ի Գործքն՝ ԶՅԻՒՍՈՒ զոր ի նազարեթէ, զոր ածն Աստուծ Հոգվեն Սրբով (Գործք. Ժ, 38). ե) զի նորա մասամբ ինչ ընկալան զշնորհս կամ գիտութեան, և այն, իսկ վասն Տեառն ասէ Կողոսացին, թէ՝ Ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս (Կողոս. Բ, 9), որ է էապէս. զ) զի նորա շնորհօք կոչեցան որդիք կամ Աստուծ որպէս Մովսէս, կամ այլ ինչ, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ըստ բնութեան միաւութեան ընդ Բանին. ըստ այնմ թէ՝ Բան մարմին եղս (Յովի. Ս, 14), և թէ՝ Ճշմարիտ որդին ազատեսցէ զեզ (Յովի. Ը, 33). է) զի նորա յայլմէ ընկալան զածումն, որպէս Եղիսէ յԵղիայէ և Դաւիթ ի Սամուելի, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս ինքնին ընկալաւ զածումն, որպէս ասեալ:

Ինքն էօծ զինքն, վասնզի ինքն է Աստուծ, ըստ որում էած և ինքն եղս մարդ, ըստ որում ածաւ կոչեցաւ ամենէ[ա]լ, զի ամեներեան գրաւեալք էին ի նախնոյն յանցանց, իսկ ի դէմս Տեառն մերոյ ասէ մարգարէն՝ Սիրեցեր զարդարութիւն, և այն, Վասն այսորիկ օծ զքեզ. թ) զի ամեներեան ի նախանէ ածեցան, իսկ նա ի նոցանէ ոչ բնաւ. ապա և առաւել է նա, որ ածաւողն է, քան զնոսա որ ածաւուին, զի ամեներեան ի ծնումն արինակ Քրիստոսի լինեին ածեալք, թէ՝ բագաւորք և թէ՝ բահանայք, և այլք: Իսկ կատարումն արինակին ճշմարտութիւն է, և առաքեալն ասէ թէ՝ Կատարումն արինաց և մարգարէիցն Քրիստոս է (Հոռմ. Ժ, 4), ապա և առաւել է ճշմարտութիւն որ է Քրիստոս, քան զարինակն, նաև որք ի նորումն ի խորհրդուրս ճշմարիտ ածելոյն ածանիմք. և նա միայն է ճշմարիտ ածեալ քան զամենայն ընկերս նորա, որպէս ցուցաւ, յաղագ որոյ ասէ մարգարէն՝ Վասն այսորիկ ածքեզ:

Այսքան է ի դէմս մարդեղութեան Քրիստոսի:

Ենք այժմ վերստին առեալ զբանս ի դէմրս քահանական ածութեան, որպէս խոստացաք ի սկզբան բանիս. նախ տեսցոյք թէ զի՞նչ է քահանայութեան և զի՞նչ է էութիւն քահանայութեան և զաստիճանս նորա: Քահանայութիւն է, ասէ Դիոնիս, կարգ սրբազն, համեմար և ներգործութիւն, իսկ էութիւն քահանայութեան կատարի Զ(6) իրաւք. ա) իշխանութիւն տը-ի/(67թ)աղին զկարգն, զի պարտ է եայիսկոպոս լինել. թ) Եհրեն, այսինքն՝ ածաւ ի քահանայսն\*. զ) ձև բանին. դ) է դիտաւորութիւն. ե) զի արոտ լինին, զի կինն ոչ ընդունի զքահանայական կնիք. զ) զի կարգ առնաւողն մկրտեալ լինիցէ: Իսկ վասրն աստիճանաց քահանայութեան վարդապետք իրաւք ինչ համաձայնին և իրաւք ինչ տարածայնին. համաձայնին այսու՝ զի ամեներեան առհասարակ ինչն են ասացեալ զաստիճանս քահանայութեանս մերոյ, ըստ Թ(9) դասուց հրեշտակացն: Իսկ վասն աստիճանաց իրեանց զանազանին Դ(8) ազգ վարդապետութեամբ. նախ՝ ըստ մեծին Դիոնիսիայ բաժանի և ի մերս քահանայութիւն ըստ Թ(9) դասուցն ըստ երկնայնց նմանութեան յերիս երրեակս որոշեալ, յորոց առաջինն է աթոռք, քերորե,

\* Բնագրում քահանայութիւն, ողոված լուսանցրում քահանապէս:

\* թերևս՝ զամենայն:

սերորդը. սոքա անընդմիջաբար վայելեն յաստուածային շնորհացն և հաղորդեն աննախանձաբար զմիշին քահանայութիւնն որք անուանին՝ տէրութիւնք, զարութիւնք, իշխանութիւնք. նոյնպէս, սոքա առանկ յառաջնոցն հաղորդեն զվերջինս, որ են՝ պետութիւնք, հրեշտակապետք և հրեշտակը. իսկ սոքա մեզ՝ մարդկան ուսուցանեն վայսըն պիտոյից մեր զամենայն լուսափայլութիւն պարգևս Աստուծոյ որպէս բոյոր երկինք են ի թի Թ-եակ (9) դասուցն լըրման, և սոյնպէս յեկեղեցի, որք միանգամ հաւատացեալք են լնուն զթի Թ(9) աստիճանաց. ա) կարգք եպիսկոպոսապետն՝ եպիսկոպոս, քահանայ, և բ) սարկաւագն, կէս սարկաւագ, սաղմոսասացք. գ) սրբազն ժողովուրդք որ են մկրտեալք. երախալքն, որ առնելց են զկնիք և ապաշխարողք, այսինքն՝ միայնակեացքն—զայս ասէ սուրբն Դիոնիսիոս:

Իսկ սոքա, ըստ Հոռմայեցոց ազգին՝ առաջին դասքն՝ պատրիարք, որ են կաթողիկոս, որ ունին զաթոռ չորից աւետարանացն. սոքա նախորտ բազմախաչ և եմիփորոն պատէ զիրեալ շորչ Ե(5) կըրկին: Գործ է նոցա ձեռնադրել զարքեախիսկոպուն և հրաման տալ ժողովս առնել և արինել զաստուածալոյս մեռոն. բ) արքեպակոպոս, որ թարգմանին պետք. սոցա [ե] միփորոն Դ(4) կրկին, և գործ է սոցա ձեռնադրել մետրապօլիտ, և Գ(3) արքեպիսկոպոս ունին իշխանութիւն ձեռնադրել զպատրիարքն. գ) մետրապօլիտսն, որ են մայրաքաղաքացիքն, [ե] միփորոն Գ(3) կրկին է: Գործ է սոցա ձեռնադրել եպիսկոպոս, և Գ(3) մետրապօլիտ ձեռնադրեն զարքեպիսկոպոս իրեանց. դ)

եպիսկոպոսք, որ են այցելուք, և [ե] միփորոն մի կրկին, միայն յառաջքն և յատքն: Գործ է նոցա ձեռնադրել քահանայս և զարկաւագ, և զայլ աստիճանապոր, և Գ(3) ի նոցանէ ձեռնադրեն զմետրապօլիտ իրեանց. ե) դաս քահանայից ունին նափորտ միայն, և գործ է սոցա կատարել զէ(7) խորհուրդ եկեղեցոյ, և որ չիցէ եպիսկոպոս, հրամանաւ եկեղեցոյ արինեն և խաչ. զ) սարկաւագունք. զգեստ է նոցա պատմուան հոյանի կալ և սուանց գաւառոյ, ուրար յամեակ յուն, բազան և բազկուրար յամեակ բազուկն: Գործ է նոցա հրամանաւ քահանային Աւետարան կարդալ, քարոզել, բառնալ զքշոց և բորուսա. է) սարկաւագն զգեստ է նոցա պատմուան հոյանի և անգօտի և բազկուրար յամեակ բազուկն: Գործ է նոցա առաքեալ կարդալ և մոմեղեն և խաչագոլիս գաւազան կրել, և գրակալ. զեկեղեցին նոքա զարդարեն և զդրուս պահեն. լ) անազանուք, որ են ընթերցողք: Գործ է նոցա ընթեռնուլ զամենայն գիրս. թ) փալաք, որ են սաղմոսասացք: Գործ է նոցա ալէլուք և մեսեղեք սաղմոս ասեն: Այս՝ ըստ Ցունաց վարդապետաց:

Իսկ ըստ այլոց վարդապետաց՝ ի ներքուստ ի վեր. առաջին կարգն է դռնապ/(68ա) անութիւն. բ) ընթերցողութիւն. գ) երդմնեցողութիւն. դ) շահվառութիւն, ե) կիսասարկաւագութիւն. զ) սարկաւագութիւն, է) քահանայութիւն, լ) եպիսկոպոսութիւն, թ) կաթողիկոսութիւն:

Ահա ցուցեալ եղն Թ(9) աստիճանք եկեղեցոյ, ըստ Թ(9) դասուց հրեշտակաց նմանութեան:

